ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-27/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	FRESH	FRESH	FRESH	FRESH	Անձեռոցիկներ խոնավ, հակաբակտերիալ, փաթեթավորումը՝ պոլիէթիլեն, 100-120 հատանոց տուփերով կամ փաթեթներով, փափուկ թղթից: Նախատեսված ձեռքերի և մաշկի արագ հիգիենիկ մաքրման, թարմացման և մինչև 99% բակտերիաների ու կեղտի արդյունավետ հեռացման համար: Պատրաստված պետք է լինեն բարձրորակ, փափուկ, խիտ, ոչ հյուսվածքային էկոլոգիապես անվտանգ կտորից, որը չի պատռվում օգտագործման

						ընթացքում: Անձեռոցիկների հիմքը պետք է հագեցված լինի հակամանրէային (հակաբակտերիալ) ազդեցությամբ օժտված մաքրող հեղուկով: Լուծույթը չպետք է պարունակի էթիլային սպիրտ (Alcohol-free) և պարաբեններ, լինի մաշկաբանորեն փորձարկված, հիպոալերգեն, նախատեսված զգայուն մաշկի համար: Բույրը՝ մեղմ, թարմ, հաճելի (առանց սուր քիմիական հոտերի): Ապրանքը պետք է մատակարարվի հարմարավետ, կոմպակտ պլաստիկե փաթեթով, որի վերին մասում անձեռոցիկների չորացումը կանխելու նպատակով պետք է առկա լինի բազմակի բացման/փակման կպչուն փական: Փաթեթի վրա պետք է հստակ ընթեռնելի լինի արտադրողի պաշտոնական պիտակը (մակնշումը)՝ բաղադրության, թերթիկների քանակի, արտադրության ամսաթվի և պիտանելիության ժամկետի պարտադիր նշումով: Մատակարարման պահին ապրանքի մնացորդային

					պիտանիության ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, նոր և որակյալ: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. Հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանհիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»: Հրավերով սահմանված պարտադիր պահանջ՝ *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: *Բոլոր ապրանքները մատակարարվելու են ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 49/2, ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և նրանց հաշվին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Мец Циацан в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎՄ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-27/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4					